ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 4(54), 29 մայիսի, 2023թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Մայիսի 16-ին ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն այցելել է ՆԳՆ կրթահամալիր:

Կրթահամալիրի պետ Մանուկ Մուրադյանի, պարեկային ծառայության պետ Արթուր Խուդինյանի և ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ Վաղինակ Մարտիրոսյանի ուղեկցությամբ ՀՀ ՆԳՆ նախարարը շրջայց է կատարել Կրթահամալիրում, հետևել է մայիսի 2-ից մեկնարկած պարեկային ծառայության վերջին՝ 4-րդ հոսքի դասընթացներին, զրուցել է դասընթացավարների և ապագա պարեկների հետ, հետաքրքրվել դասապրոցեսի և ուսումնական ծրագրի մասին:

Հիշեցնենք, որ ՆԳՆ կրթահամալիրում դասընթացներ են անցկացվում պարեկային ծառայության Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի և Սյունիքի ստորաբաժանումների ապագա պարեկների համար: Դասընթացը տևում է հինգ ամիս, որի ընթացքում սովորողներին դասավանդվում է 24 մոդուլից բաղկացած ուսումնական ծրագիր: Ուսումնառության վերջին մեկ ամիսը նախատեսված է մասնագիտական պրակտիկայի համար, ինչից հետո պետական ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած սովորողները հոկտեմբերից չորս մարզերում կանցնեն ծառայության, և այսպիսով պարեկային ծառայությունը կգործի հանրապետության ողջ տարածքում:

ՉԵԽԻԱՅԻ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԸ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ



Մայիսի 23- 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներ հնարավորություն ունեցան ծանոթանալու անչափահասների հարցաքննության առանձնահատկությունների ու ընտանեկան բռնության վերաբերյալ չեխական փորձին: Չեխիայի ՆԳՆ ոստիկանության անվտանգության զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում անցկացված դասընթացը վարում էին Չեխիայի ՆԳՆ ոստիկանության փորձագետներ Իվետա Զդարշկան, Մարտին Կլեչկան, Միրոսլավ Ադամչիկը, Յարոսլավ Հրաբալեկը, Պավլա Վանտուչովան:

Դասընթացավարները շրջայց կատարեցին Կրթահամալիրի տարածքով, ծանոթացան քրեագիտության մասնագիտացված լսարանին, փորձակայանին և մարզադահլիճին:

Ընթացքում հյուրերը՝ Ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գագիկ Գրիգորյանի գլխավորությամբ, հանդիպեցին և մասնագիտական քննարկումներ ունեցան ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Հռիփսիմե Խաչատրյանի, ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Անի Կիրակոսյանի հետ:

Հանդիպումների շարքն ամփոփվեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանի աշխատասենյակում, որտեղ քննարկվեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ԿԱՅԱՑԱՎ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԳՆ ԲՈՒՀԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մայիսի 25-ին Տաջիկստանի Հանրապետության ՆԳՆ ակադեմիայում տեղի ունեցավ ԱՊՀ մասնակից պետությունների ՆԳՆ բուհերի ղեկավար կազմի պատրաստման ասոցիացիայի ամենամյա 14-րդ հանդիպումը:

Հանդիպմանը մասնակցում էր ԱՊՀ անդամ երկրների ՆԳՆ և ոստիկանական բուհերի ղեկավար կազմը:

Բացման խոսքով հանդես եկավ ՌԴ կառավարման ակադեմիայի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ոստիկանության գեներալ-մայոր Սերգեյ Սինենկոն, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին և ընգծեց հանդիպման կարևորությունն ու դրական անդրադարձը շարունակական համագործակցության վրա:

Առցանց ելույթով հանդես եկավ նաև ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, որը միջոցառման կազմակերպիչներից շնորհակալություն հայտնեց նման նշանակալի հանդիպում նախաձեռնելու համար. «Ասոցիացիայի անդամ ուսումնական հաստատությունների ունեցած անսպառ ներուժը պետք է ոգեշնչող գործոն ծառայի բոլորիս համար՝ նպաստելով կառուցողական երկխոսությանը և մեր ընդհանուր խնդիրների համատեղ լուծմանը»:

Զեկույցներով հանդես եկան նաև ասոցիացիայի անդամ բուհերի այլ ղեկավարները, քննարկվեցին և որոշումներ կայացվեցին կազմակերպչական բնույթի հարցերի վերաբերյալ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Մայիսի 23-ին և 24-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ «Արևելյան գործընկերության տարածաշրջանում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի» ծրագրով աշխատանքային հանդիպում, որի նպատակն էր ընդլայնել Արևելյան գործընկերության երկրների ներգրավվածությունը միասնական գործողություններին և օպերացիաներին՝ Քրեական սպառնալիքների դեմ պայքարի եվրոպական բազմամասնագիտական հարթակի (EMPACT) շրջանակում:

Աշխատանքային հանդիպմանը մասնակցում էին Եվրոպոլի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Ռումինիայի, Մոլդովայի, Վրաստանի, Հայաստանի ներկայացուցիչները և ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողները:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Վարդանյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց հանցավորության դեմ պայքարի գործում ծրագրի կարևորությունն ու առանձնահատուկ դերը, վստահեցրեց, որ քննարկվող արդի թեմաներն արդյունավետ անդրադարձ են ունենալու Եվրոպոլի, ԵՄ և արևելյան գործընկերության երկրների ոստիկանական կառույցների փոխշահավետ համագործակցության վրա:

Ելույթով հանդես եկան ՀՀ ՆԳՆ, Իսպանիայի Թագավորության քաղաքացիական գվարդիայի, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժանդարմերիայի, Վրաստանի ՆԳՆ, Մոլդովայի և Ռումինիայի Հանրապետությունների ոստիկանական մարմինների ներկայացուցիչները:

Զեկույցների թեմաներն ընդգրկում էին տարբեր երկրների քրեական վիճակագրություններն ու կոնկրետ հանցագործությունների դեմ պայքարի մարտավարության համեմատական վերլուծությունները: Առավել ընդգրկուն ներկայացվում էին տարբեր երկրներում կազմակերպված հանցավոր խմբերի դեմ պայքարի առանձնահատկությունները, հետխորհրդային երկրների տարածքում տեղ գտած «օրենքով գող» հասկացության իրավական սահմանումները, տվյալ համակարգի դեմ պայքարի իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցառումները: Ելույթներ եղան նաև Եվրոպոլի տեղեկատվության փոխանակման SIENA համակարգի վերաբերյալ:

Միջոցառման մասնակիցները շրջայց կատարեցին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի տարածքով, այցելեցին փորձակայաններ և քրեագիտության լսարաններ, մարզադահլիճներ, ապա ՀՀ ՆԳՆ թանգարանում ծանոթացան հայկական ոստիկանության պատմությանը:

ՎԱՐԺԱԽԱՂԵՐԻ ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐՈՒՄ

Մայիսի 29-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողների 2022-2023 ուստարվա վարժախաղերի հրահանգավորումը:

Միջոցառմանը մասնակցում էին Կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը, ակադեմիայի ղեկավար կազմի ներկայացուցիչները, խաղային խմբերի ղեկավարները, վարժախաղերին որպես խորհրդատու ներգրավված ծառայողները, ինչպես նաև իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողները:

Հրահանգավորման ընթացքում Կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գրիգորյանը պարզաբանեց վարժախաղերի անցկացման կազմակերպական բնույթի հարցերը, կարևորեց պրակտիկայի ընթացքում ձեռք բերված հմտությունների և ունակությունների ամրապնդման գործում վարժախաղերի դերը, սովորողների ուշադրությունը հրավիրեց վարժախաղերի առավել առանցքային խնդիրների վրա, իսկ խորհրդատուներին հորդորեց ուշադրության կենտրոնում պահել սովորողների տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման ունակությունները և դիտարկել վարժախաղերի կատարելագործման հնարավոր ուղիներն ու միջոցները:

Կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Հովհաննիսյանը ներկայացրեց կրթահամալիրի պետի հրամանով ձևավորված վարժախաղերի խմբերը, դրանց ղեկավարներին և խորհրդատուներին:

Միջոցառման ավարտին ակադեմիայի պետը պատասխանեց սովորողների հարցերին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ



Մայիսի 25-ին տեղի ունեցավ ՌԴ ՆԳՆ Վ. Լուկյանովի անվան Օրյոլի իրավաբանական ինստիտուտի կազմակերպած՝ «Երիտասարդների աչքերով իրավունքի արդի հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական հեռավար համաժողովը:

ԱՊՀ անդամ երկրների ոստիկանական բուհերի ներկայացուցիչների շարքում էր նաև ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Նաիրի Զիլաբյանը: Վերջինս ներկայացրեց «Անձնական տվյալների պաշտպանության օրենսդրությունը և իրավական կարգավորումների արդի հիմնախնդիրները» թեմայով զեկույցը, որի շուրջ ակտիվ քննարկում ծավալվեց:

Զեկույցի գիտական ղեկավարն էր Ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և դատավարության ամբիոնի պետի ժ.պ., ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության կապիտան Գայանե Մարուքյանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 21-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՆԱԵՎ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

Մայիսի 19-ին ՌԴ Սիբիրի իրավաբանական համալսարանի 25-ամյակին նվիրված և վերջիններիս կազմակերպած «Սիբիրյան իրավաբանական ուսանողական ընթերցումներ» վերտառությամբ միջազգային 21-րդ գիտաժողովին մասնակցելու հայտ էին ներկայացրել ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի առկա անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորողներ՝ ոստիկանության ավագ սերժանտ Նաիրի Զիլաբյանը, ոստիկանության ավագ սերժանտ Ժաննա Տեփանոսյանը և քոլեջի 2-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Էլեոնորա Հախնազարյանը:

Գիտաժողովի շրջանակներում «Պատշաճ վարչարարության որոշ հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետությունում» զեկույցով հանդես եկավ Կրթահամալիրի ակադեմիայի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Նաիրի Զիլաբյանը, իսկ «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում և դրանց դեմ պայքարի որոշ ուղղություններ» զեկույցով հանդես եկավ Կրթահամալիրի քոլեջի սովորող, ոստիկանության սերժանտ Էլեոնորա Հախնազարյանը: Գիտաժողովի մասնակիցները նրան որոշ հարցեր ուղղեցին՝ ՀՀ-ում վարչարարության իրականացման գործող մեխանիզմների վերաբերյալ:

Համակարգման նպատակով միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Անի Կիրակոսյանը:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ՝ ՆԳՆ ՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մայիսի 15-18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ «Զանգվածային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանում» թեմայով վերապատրաստման դասընթաց՝ հայ-ֆրանսիական ոստիկանության համագործակցության 2023թգ ծրագրի շրջանակներում: ՀՀ ՆԳՆ տարբեր ստորաբաժանումների ծառայողների հետ իրենց փորձն էին եկել կիսելու Ֆրանսիայի ոստիկանության ազգային անվտանգության մարմնի (C.R.S) փորձագետներ Քվենտին Վինոտը և Նիկոլա Լուվիեն:

Դասընթացի մեկնարկին ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը ողջունեց հյուրերին ու մասնակիցներին՝ նշելով, որ Կրթահամալիրը հետևողականորեն կազմակերպում ու նախաձեռնում է նմանատիպ միջոցառումներ՝ նպաստելու ծառայողների գիտելիքների, գործնական հմտությունների բարելավմանը:

Քառօրյա դասընթացը հագեցած էր զանգվածային հավաքների ժամանակ ֆրանսիական ոստիկանության ձեռնարկած մարտավարական գիտելիքներով ու հմտություններով, Հայաստանի և Ֆրանսիայի համապատասխան ստորաբաժանումների առանձնահատկությունների համեմատական վերլուծությամբ, գործնական վարժություններով ու ակտիվ քննարկումներով: Գործնական վարժություններից մեկին ակտիվ մասնակցություն ունեցան նաև Կրթահամալիրի սովորողները:

Դասընթացն ամփոփվեց Կրթահամալիրի պետի շնորհակալական խոսքով՝ ֆրանսիական փորձը ՆԳՆ ծառայողներին արդյունավետ փոխանցելու համար:

Ֆրանսիական փորձը յուրացնելու կապակցությամբ մասնակիցներն ստացան համապատասխան հավաստագրեր:

ԹՊԻՀ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՅՑԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Մայիսի 18-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիր էին այցելել ԱՄՆ ԹՊԻՀ ծրագրի կենտրոնական գրասենյակի աշխատակից Ռեյչել Կուկը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության ԹՊԻՀ (Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակ) ծրագրի ղեկավար Ալեքսիս Հաֆթվանին և ծրագրի պատասխանատու Կարինե Քեշաբյանը:

Հյուրերին դիմավորեց Կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանը, պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Միսակ Մարկոսյանը, ՌՄ միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը:

Հյուրերը շրջեցին Կրթահամալիրի տարածքով, այցելեցին փորձակայաններ, Քրեագիտության մասնագիտացված լսարան և մարզադահլիճ:

Հանդիպումը շարունակվեց Կրթահամալիրի պետի աշխատասենյակում, որտեղ Մ. Մուրադյանը Ռեյչել Կուկին ներկայացրեց Կրթահամալիրի կառուցվածքը և իրականացվող կրթական ծրագրերը: Մանրամասն անդրադարձ կատարվեց ԹՊԻՀ գրասենյակի կողմից Կրթահամալիրին տրամադրվող օժանդակությանը՝ ընդգծելով դրա կարևորությունը ներկայումս իրականացվող փոփոխությունների համատեքստում:

Այցի ընթացքում քննարկվեցին նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՄԵՆՔ ԿԱՆՔ, ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՈՒ ԴԵՌ ՇԱՏԱՆԱՆՔ

Դժվար էր մեր ուղին, բայց նպատակը վեհ էր, իսկ դեպի վեհ նպատակ տանող ուղին հաղթանակ է:

Մոնթե Մելքոնյան

Հիրավի մեզնից յուրաքանչյուրն իր հոգու խորքում ունի աշխարհագրական քարտեզի իր օրինակը, որտեղ սահմաններն ուղղակի մտովի, գրիչի մի քանի հարվածով են գծված, ու մի քանի միլիմետր շեղումն անգամ պատերազմների առիթ չի դառնում: Մեր պատմության ողջ ընթացքում մենք պայքարել ենք. սկզբում՝ ապրելու, այնուհետև՝ պետություն ու պետականություն ունենալու, հետագայում՝ անկախանալու ու գալիք սերնդին ավելի հզոր ու անպարտ հայրենիք ժառանգելու համար, իսկ պայքարի միակ պայմանը հաղթանակն էր: Հաղթանակ, որը տրվում է պայքարի գնով: Ու սովորական կռիվը պայքար է դառնում, երբ դառնում ենք մեկ միասնական բռունցք, մեկ ազգ ու մեկ պետություն, քանի որ պաշտպանության կարիք ունի մեր ամենաթանկը՝ Հայրենիքը, որովհետև «Հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ այն մեծ է, այլ նրա համար, որ քոնն է»: Հայոց աշխարհը, նրա լեռներն ու քարափներն են մեզ տվել իրենց կարծրությունը, որ հայի հոգում համբերություն ու համառություն են դարձել: Այստեղ է, որ լսում ես հայրենիքիդ հավերժության երգը և գիտակցում, որ դու ես նրա սուրբ բազկի ուժն ու զորությունը: Իսկ մեր պայքարի, իրար հաջորդող հաղթանակների ու անկոտրում կամքի լուռ վկան է դարձել մայիսը, որ փոխարինելու է եկել Պատմահորը՝ դառնալով պատմական հաղթանակների ու բախտորոշ իրադարձությունների արձանագրողը: Մայիս՝ Եռատոն Ավարայրի ճակատամարտից մինչև 1992 թվական, երբ 200-ամյա գերությունից ազատագրվեց Արցախի մայրաքաղաք Շուշին: Մայիս՝ հաղթանակների և վրեժխնդրության ամիս, ապրելու ու Փյունիկի նման վեր հառնելու ամիս, որովհետև Հայը միշտ պիտի լինի, որովհետև գալիք սերնդին փոխանցելու արժեքներ ունի, հայրենասեր զավակներ դաստիարակելու առաքելություն ունի, չէ՞ որ Նժդեհը փաստում էր. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում՝ դրա պակասի պատճառով...»: Մենք պիտի հայրենիքի ապրելու գրավականը լինենք, ոչ թե՝ կործանման պատճառը: Իսկ հայրենասիրությունն սկսվում է հայրենատիրությունից, երբ մեր գիտակցության ամեն բջիջ իր վրա պատասխանատվություն կվերցնի տեր կանգնելու ամեն միլիմետրին, ամեն սար ու քարին, երբ մեր սիրտը կցավի մեր հայրենակցի անհաջողության, վշտի համար ու կցնծա ամենափոքր ձեռքբերումից, երբ մեր միտքը միայն հայրենիք կգոռա, իսկ լեզուն միայն աղոթք կշշնա՝ հանուն հայրենիքի խաղաղ լուսաբացների:

Հայ... Դարերի խորքից եկած ու դեպի դարերի խորքը գնացող ազգ: Ազգ, որ գոյության ողջ ընթացքում պայքար է մղել հանուն ապրելու, ազգ, որի զավակները պատմություն են կերտել ու պատմության էջերը ոսկեզօծել են իրենց անուններով, իրենց հաղթանակներով, որովհետև կրում են Արաբոյի, Անդրանիկի, Նժդեհի, Մոնթեի գենը:

Բեռլինից մինչև Շուշի մեզ միայն հաղթանակներ են ուղեկցել, բայց այս երկրում ցավոտ է անգամ հաղթանակն ու նրանից ծնված հպարտությունը, որովհետև դրանք ծնունդ են առել բազում քաջերի կյանքի հաշվին, նրանց ընդհատված երազանքների ու այդպես էլ չիրագործված նպատակների հաշվին, դրա համար էլ կրկնակի ու եռակի թանկ են արժենում: Բայց մենք հաղթանակած ազգ ենք, ու հայոց աշխարհում հաղթանակած մայիսները փոխարինելու են միմյանց, մայիսյան արշալույսները հայոց աշխարհում միայն հաղթանակներով են բացվելու, իսկ մենք «կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»...

Մելսիդա Ավետիսյան
Իրավագիտության ֆակուլտետ,
2-րդ կուրս

ԱԼԵՔՍԵՅ ՀԵՔԻՄՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՔՈՑԱՌՈՒՄԸ

Մայիսի 10-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ՀՀ ներքին գործերի նախարարության աջակցությամբ և Թովմասյան հիմնադրամի նախաձեռնությամբ տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված խորհրդային միլիցիայի գեներալ-մայոր Ալեքսեյ Հեքիմյանի ծննդյան օրվան:

Ներկա էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը, պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Մ. Մարկոսյանը, ղեկավար կազմը, Թովմասյան հիմնադրամի հոգաբարձուներից խորհրդի նախագահ, բարերար Արտակ Թովմասյանը, ՀՀ կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, Կոմպոզիտոր Էդգար Գյանջումյանը և Մոսկվայի տան տնօրեն Վահրամ Կարապետյանը:

Հյուրերը շրջեցին Կրթահամալիրի տարածքով, հարգանքի տուրք մատուցեցին ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների հիշատակին, այնուհետև Թովմասյան հիմնադրամի աջակցությամբ տեղադրված մեծանուն կոմպոզիտոր, խորհրդային միլիցիայի գեներալ-մայոր Ալեքսեյ Հեքիմյանի կիսանդրու մոտ տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված անվանի կոմպոզիտորին:

Հնչեցին Ալեքսեյ Հեքիմյանի հեղինակային՝ «Բարի արագիլ», «Կռունկ» «Բարով եկար», «Երգիր ինձ համար» երգերը: Միջոցառմանը ելույթ ունեցան Ռոմանոս Մելիքյանի անվան պետական քոլեջի

փոխտնօրեն Արման Նիկոլյանը, քոլեջի սաները, ինչպես նաև երգիչներ Սյուզի Արամյանը և Գևորգ Պողոսյանը:

Ցերեկույթն ամփոփվեց Ալեքսեյ Հեքիմյանի մասին հիշողություններով և անջնջելի պատմություններով:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 31.01.2022 թիվ 1 նիստում հաստատված «Գիտաժողովների, ամենամյա գիտական հետազոտությունների ամփոփման, կազմակերպման և անցկացման կարգ»-ի և Կրթահամալիրի պետի հաստատած ժամանակացույցի շրջանակներում մայիսի 26-ին Կրթահամալիրում տեղի ունեցավ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը» խորագրով գիտագործնական քննարկում, որը կազմակերպել էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը: Քննարկմանը մասնակցում էին հրավիրված բանախոս, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ղազանչյանը, ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյանը, ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության մայոր Ա. Մարգարյանը և Կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար և վճարովի ուսուցման 2-րդ կուրսի սովորողները:

Զեկույցներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ղազանչյանը՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումը հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համատեքստում» թեմայով, իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորող Ն. Զիլաբյանը՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը» թեմայով:

Զեկուցումների արդյունքում ծավալվեց ակտիվ քննարկում, բանախոսները ՄԻԵԴ նախադեպային որոշումների, ներպետական իրավական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ առաջադրված բոլոր հարցադրումներին սպառիչ պատասխաններ տվեցին:

Մայիսի 24-ին տեղի ունեցավ «Քրեական հետապնդման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում» խորագրով գիտագործնական քննարկում, որը կազմակերպել էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնը:

Մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, քրեական դատավարության ամբիոնի դասախոսական կազմի ներկայացուցիչները, վճարովի ուսուցման 2-րդ և 3-րդ կուրսերի սովորողներ:

Քննարկմանը հրավիրված էր նաև մասնագետ, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Բիշարյանը:

Քրեական հետապնդման հիմնախնդիրների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան ակադեմիայի վճարովի ուսուցման սովորողներ Հայկուհի Պողոսյանը և Գևորգ Անանյանը: Զեկույցների ընթացքում բանախոսներն անդրադարձան «քրեական մեղադրանք» և «քրեական հետապնդում» հասկացությունների հարաբերակցության, ինչպես նաև քրեական հայցում ձևակերպված մեղադրանքի ապացուցվածության շեմին ներկայացվող պահանջների հիմնահարցերին:

Զեկույցների ավարտին բանախոսներին տրվեցին ՀՀ ներպետական իրավունքին, նախադեպային որոշումներին, իրավակիրառ և դատական պրակտիկային առնչվող հարցեր, ծավալվեց ակտիվ քննարկում:

Մայիսի 24-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ գիտագործնական հերթական քննարկումը՝ «Բանակցությունները (մեդիացիան) ոստիկանական գործառույթում» թեմայով: Միջոցառումը կազմակերպել էր Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնը: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Մ. Մարկոսյանը, ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետի տեղակալը, անչափահասների գործերով և ընտանեկան բռնության դեմ պայքարի վարչության պետ, ոստիկանության գնդապետ Էդգար Պետրոսյանը, դասախոսական կազմի ներկայացուցիչներ և տարբեր կուրսերի սովորողներ:

Զեկուցումների արդյունքում ակտիվ քննարկում ծավալվեց, ոլորտին վերաբերող հարցերին բանախոսներն սպառիչ պատասխաններ տվեցին:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից 31.01.2022թ. թիվ 1 նիստում հաստատված «Գիտաժողովների, ամենամյա գիտական հետազոտությունների ամփոփման, կազմակերպման և անցկացման կարգ»-ի և կրթահամալիրի պետի հաստատված ժամանակացույցի շրջանակներում մայիսի 5-ին Կրթահամալիրում տեղի ունեցավ «Վարչական պատասխանատվության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտագործնական քննարկում, որը կազմակերպել էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Մ. Մարկոսյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Գ. Գրիգորյանը, կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության կապիտան Տ. Խաչատրյանը, հրավիրված բանախոսներ՝ ՀՀ Վարչական դատարանի դատավոր, ամբիոնի դասախոս Միհր Պետրոսյանը, ՀՀ ԱՆ գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնաթող տեղակալ, փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, ամբիոնի դասախոս Արմեն Հարությունյանը, փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Հասմիկ Նազարեթյանը, ամբիոնի պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ., դոցենտ Գ. Խուդոյանը, ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Ա. Կիրակոսյանը և Կրթահամալիրի 2-րդ, 3-րդ կուրսերի անվճար և վճարովի ուսուցման սովորողներ:

Վարչական պատասխանատվության որոշ հիմնա- ▶ 4

ՍԻՐՈ ԵՐԳԻՉ, ՈՐԸ ՆՎԱՃԵՑ ԱՇԽԱՐՀԸ

Ֆրանսահայ նշանավոր երգիչ, շանսոնիե, երգահան, բանաստեղծ, գրող, կինոդերասան և հասարակական գործիչ Շառլ Ազնավուրը ծնվել է Փարիզում 1924 թ. մայիսի 22-ին:

Բարդ է եղել նրա անցած ուղին, սակայն նրան չխանգարեց ոչ հիասթափությունը, ոչ անհաջողությունները և ոչ էլ աղքատությունը: Նրա՝ մեծ երազանք և նպատակ տանող համարձակությունը հաղթեց այդ խանգարող հանգամանքներին: Բաղձալի երազանքի հետևից գնաց՝ համառորեն անտեսելով Փարիզյան Բոհեմում արվեստագետի դժվարագույն ճանապարհը:

Սկզբում նրա բեմելն այնքան էլ չողջունեց փարիզյան հանդիսատեսը. ճնճղուկի նման փոքրամարմին, խզված, խոպոտ ու փոքր ձայնով, ոչ բեմական տեսքով երիտասարդը, սակայն, չընկրկեց, համառորեն պայքարեց, ու թեև ժամանակին նրան վստահեցրել էին, որ ինքը երգել չգիտի, բայց հետագայում նա ապացուցեց, որ երգով կարող է գերել յուրաքանչյուրի սիրտն ու հոգին:

1941 թվականին Ազնավուրը հանդիպում է «Մյուզիք-Հոլ» դպրոցի տնօրեն, կոմպոզիտոր, դաշնակահար Պիեռ Ռոշին, նրանք ընկերանում են ու ստեղծում «Ռոշ և Ազնավուր» զուգերգը (1943-1950): Ելույթներ են ունենում տարբեր համերգասրահներում, սակայն զգալի հաջողություններ չեն գրանցում: Հետագայում Ռոշ և Ազնավուր դուետը երբ արդեն մեծ ճանաչում է ունենում, Ազնավուրը մեկնում է Ֆրանսիա՝ համառորեն պայքարելով մեներգչի կարիերայի համար:

Ճակատագրական է լինում նրա հանդիպումը Պիաֆի հետ, ու նրա խորհրդով էլ սկսում իր մեներգչի կարիերան, որը սկզբնական շրջանում հաջողություն չի ունենում: Մի քանի չընդունված ելույթներից հետո 1959 թ. Փարիզի Օլիմպիա համերգային դահլիճում այս համառ հայ երիտասարդը փորձում է ևս մեկ անգամ գրավել բծախնդիր ու բարձրաճաշակ ֆրանսիացիների սիրտը. երբ վարագույրը բացվում է, նրա ձայնը տարածվում է ու կախարդում հանդիսատեսի սիրտը, այլևս ոչ ոք չի նկատում նրա ոչ բեմական արտաքինը, հային հատուկ մեծ քիթն ու կարճ հասակը, իսկ երբ վարագույրը փակվում է, ծափերը չեն դադարում: Այսպես ֆրանսիական երաժշտության երկնակամարում սկսում է փայլատակել նոր աստղ, որ իր արվեստով պիտի խոսեր ամբողջ աշխարհի հետ: Նա սկսում է համագործակցել Ժիլբեր Բեկոյի հետ: 1956 թվականին համերգներով հանդես է գալիս Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, ինչը նրան մեծ ճանաչում և հաջողություն է բերում: Ըստ CNN և TIME-ի հետ անցկացրած հարցումների՝ Շառլ Ազնավուրը ճանաչվել է XX դարի լավագույն էստրադային երգիչ:

Այլևս իրար հաջորդեցին համաշխարհային շրջագայությունները, ու շողարձակեց փառքի չխամրող լույսը: Եվ չնայած աշխարհը ճանաչեց ու խոնարհվեց այդ փոքրամարմին, բայց բեմում հսկա ֆրանսահայ երգչի առաջ, սակայն նա միշտ մնաց հավատարիմ իր հայրենիքին, հնարավոր և անհնար փորձությունների միջով անցած հայ ժողովրդին: Հայրենասիրությունն ու արյան կանչն այնքան մեծ էր նրա սրտում, որ անտարբեր չէր իր հայրենիքի ճակատագրի նկատմամբ, և նրա արձագանքը երբեք չէր ուշանում ցանկացած ցավի ու օգնության դեպքում: Նա միշտ հայ ժողովրդի կողքին էր դժվար և ծանր պահերին, ինչպես 1988 թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Մեծ հայրենասերը, իմանալով այդ սարսափելի ավերիչ երկրաշարժի մասին, ընդհատում է իր հյուրախաղերը և անմիջապես գալիս է Գյումրի՝ կանգնելով սգացող ժողովրդի կողքին, նյութական մեծ օգնություն ցուցաբերում տուժած ընտանիքներին ու քաղաքներին, հիմնադրում է «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամը և համերգների ողջ հասույթն ուղղում աղետի գոտի: Նրա մեծությունը երևում է հենց այնտեղ, երբ Ֆրանսիացի աշխարհահռչակ մեծանուն երգիչներին հավաքում է մեկ նպատակի շուրջ և, կատարելով «Քեզ համար, Հայաստա՛ն» երգը, ամբողջ աշխարհի ուշադրությունն ուղղում է մեր երկրի վրա:

Նա մեծ հայրենասեր, անդավաճան և սրտացավ, տիեզերաձավալ ներաշխարհով, սիրով ու շռայլ բարությամբ լի ՄԱՐԴ էր, ինչի շնորհիվ նվաճեց աշխարհը, մարդ, ով չկա, բայց իր աստղը շարունակում է փայլատակել արվեստի երկնակամարում:



Մեզ համար մեծ հպարտություն է լինել մեծ վարպետի հայրենակիցը, ով միշտ բարձր պահեց Հայաստան երկրի անունն ամբողջ աշխարհում, և աշխարհն այսօր մեզ ճանաչում է Շառլ Ազնավուր անունով:

Իրոք որ ազգի հասցեն մշակույթն է, մեզանում կան անուններ, որոնց առջև պետք է գլուխ խոնարհել, քանզի նրանց շնորհիվ մեր ազգն աշխարհով մեկ ճանաչելի դարձավ: Թվաքնակը չէ ազգի մեծության չափանիշը, ոչ էլ տարածքը. մեր մի բուռ ժողովուրդը և մի ափ պետությունն այնպի մեծություններ է ծնել, ինչպիսին Կոմիտասն է, Արամ Խաչատրյանը, Առնո Բաբաջանյանը, Վիկտոր Համբարձումյանը, Մարտիրոս Սարյանը և այսպես շարունակ... Հայտնի արվեստաբան, Ազնավուրի կենսագիր Իվ Սալն այնքա՜ն բնորոշ է գնահատել Ազնավուրին. «Այդ ձայնը, որ թվում է՝ կանգնած է աղետի եզրին և ցանկացած պահի կարող է խզվել ու լռել, շնչարգելությամբ տառապողի, բայց տղամարդավարի ալպինիստական գագաթը գրավողի շքեղ ձայն է: Վիրավոր թռչնի խուլ ու պատռված ձայն, որը բեմի վրա իր փետուրների հետ մեկտեղ նետում է սիրո հրաշալի երգեր: Հոգեվարքի մեջ գալարվող այդ ստրադիվարիուսը՝ այդ ձայնը, որ կարծես հանգած հրաբուխից լինի, բառեր է ուղղում ավելի շուտ սրտին, քան լսողությանը ու հնչում է ամբողջ աշխարհում»:

Նա մեր հենարանն էր, մեր հպարտությունը, իր բեմական անհաղթահարելի հմայքով աշխարհին նայող մեր պատմության մի մեծ մասնիկն էր: Նա մեր էությունն էր՝ իր անսահման տխուր աչքերով, իր իմաստուն ու ներողամիտ լռությամբ, հայոց ողբը լացող իր դողացող ձայնով:

Նա վաստակել է դարի մեծագույն լեգենդի անունն ու անփոխարինելի սերը և վայելել համայն աշխարհի հարգանքը: Ազնավուրը ոչ միայն դարի մեծագույն արտիստն էր, այլև ՄԱՐԴԸ:

Լիանա Սահակյան
Առաջատար մասնագետ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔ

3 ◀ հարցերի վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մ. Պետրոսյանը, Ա. Հարությունյանը, Հ. Նազարեթյանը, Ա. Կիրակոսյանը՝ անդրադառնալով վարչական պատասխանատվության որոշ սուբյեկտների, մասնավորապես՝ պաշտոնատար անձանց և անչափահասների վարչական պատասխանատվության առանձնահատկություններին, վարչական պատասխանատվության ժամկետների, ինչպես նաև դատական ակտը դիտավորությամբ չկատարելու հանցակազմի ապավարչականացմանը և դրա հետ կապված՝ ապագայում հնարավոր վտանգներին: Զեկույցների ընթացում մատնանշվեցին նշված ինստիտուտի օրենսդրական կարգավորման իրավական որոշ բացեր, առաջարկվեցին դրանց հնարավոր լուծումների տարբերակներ:

Զեկուցումների արդյունքում ծավալվեց ակտիվ քննարկում, բանախոսներին տրվեցին մի շարք հարցեր, որոնց պատասխաններն ընդգրկում էին ՀՀ ներպետական իրավունքի, նախադեպային որոշումների, իրավակիրառ և դատական պրակտիկայի շրջանակները:

Ապրիլի 28-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում տեղի ունեցավ գիտագործնական հերթական քննարկումը, որը նվիրված էր «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դատական նախադեպերի ընդունման և կիրառման առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմային: Միջոցառումը կազմակերպել էր Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնը: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Մ. Մարկոսյանը, ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ Գ. Գրիգորյանը, կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության կապիտան Տ. Խաչատրյանը, հրավիրված մասնագետ, փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարություն Ակլունցը, դասախոսական կազմի ներկայացուցիչներ և տարբեր կուրսերի սովորողներ:

Զեկույցներով հանդես եկան քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի դասախոս, ոստիկանության կապիտան Լ. Թասալյանը՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում նախադեպերի ընդունման և կիրառման կարգը» թեմայով, ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2-րդ կուրսի սովորող Սերգեյ Բադալյանը՝ «Դատական նախադեպերի կիրառման առանձնահատկությունները ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով, ակադեմիայի վճարովի 3-րդ կուրսի սովորող Լիա Բեգլարյանը՝ «Դատական նախադեպերի ընդհանուր բնութագիրը միջազգային և ներպետական իրավունքում» թեմայով:

Զեկուցումների արդյունքում ծավալվեց ակտիվ քննարկում, բանախոսներին տրվեցին մի շարք հարցեր, որոնք սպառիչ պատասխաններ ստացան:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Նոր բարձրահարկ շենքը բոլորովին վերջերս է կառուցվել, դրա համար բնակարանների մեծ մասը բնակեցված չէ, բայց հայտնի է, որ 2-րդ հարկում միայն մեկ բնակարան է բնակեցված, 5-րդ հարկում՝ 2 բնակարան, 7-րդ հարկում՝ 4 բնակարան, 9-րդ հարկում՝ 3 բնակարան:
Ո՞ր հարկում են բնակիչներն ավելի հաճախ օգտվում վերելակից:

2. Տղամարդը գնում է գնացքով և երազում տեսնում, որ նա նստած է հատակի վրա, իսկ հատակի տախտակները պոկվում ու ընկնում են ցած: Ու միայն մի տախտակ է մնացել:
Ի՞նչ պետք է անի տղամարդը, որպեսզի չընկնի:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Էսկիմոսներն ապրում են հյուսիսային բևեռում, իսկ պինգվինները՝ հարավային:
2. Կանգնել էր մեծ սառույցի կտորի վրա, որը հետո հալվել էր:

Ստեղծագործում են մերոնք

ՏՈՒՆ ԱՐԻ

Դու մեկ-մեկ գոնե երազի՛ս արի,
Միայն թե մի՛ թող ճանկերում չարի,
Արի՛ ու հոգիս ջերմացրու՛ քեզնով,
Արի՛, ինձ մի՛ թող ապրել կարոտով:
Կարոտդ սրտիս մեծ վերք է դարձել,
Ու տե՛ս՝ այդ ցավից ոնց եմ ծերացել,
Գալուդ օրերն եմ ամեն օր հաշվում,
Չգալուդ հետ երբեք չեմ հաշտվում:
Միգուցե ես միշտ այդպես էլ ապրեմ,
Ինչքան էլ ապրեմ, միշտ քեզ սպասեմ,
Սպասեմ ու միշտ օրերը հաշվեմ՝
Միգուցե մի օր քեզ նորից գրկեմ:
Գիտեմ՝ ժպտում ես հիմա երկնքից
Ու ամեն պահի օգնում ես կողքից,
Որ լինեմ լավը լավագույններից,
Որ չվիատվեմ, կոտրվեմ ցավից,
Որ արժանանամ այն բարձունքներին,
Որոնք այս կյանքում նաև քոնն էին:
Բայց քանի որ դու հասար աստղերին,
Քո տեղը գտար, հասար երկնքին,
Քո բաժին սերը, երազանքն անգին,
Հանգիստ դրեցիր դու իմ ուսերին:
Ես գիտեմ՝ դու միշտ կապրես իմ ներսում,
Քո երազները կպահեմ իմ սրտում,
Ու կկատարեմ քո մեծ իղձերը,
Քո բարի սրտի ցանկությունները:
Ու հանուն քո սուրբ, բարի անունի՝
Քո քույրը ուժեղ ու հպարտ կապրի,
Բոլորն էլ գիտեն՝ ինձ հերոս պետք չի,
Եթե կարող ես, մի օր տուն արի...

Ավետիսյան Մելսիդա
իրավագիտության ֆակուլտետ, 2-րդ կուրս

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 28.05. 2023թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան